ղել են ոչ աւելի, քան ժառանգական գիւղապետներ միայն:

Ահա հայկական այդ «ազնուականութիւնը», որ սոսկ, պատուոյ իրաւունքներ է վայելել ու չէ եղել կալուածատէր, գիւղացիների հանդէպ էլ չէ ունեցել այլազան իրաւունքներ (պարտադիր աշխատանք, եւայլն): Այդ «ազնուականները» մնացած հայերից ուրիշ ոչնչով չեն տարբերուել: Խնամութեան խնդրում իսկ չէ զգացուել «դասակարգային նախապաշարում» (Ա. 189):

«Երբ, շարունակում է Հաքստհաուզէն, Հայաստանը ռուսների ձեռքն անցաւ, կառավարութիւնը վաւերագրեր պահանջեց գիւղապետների արտօնութիւնները հաստատող, եւայլն: Օրինական պիտի համարուէին միայն պարսից Շահի կողմից տրուած արտօնութիւնները: Եւ երբ հայերը չկարողացան ներկայացնել այդպիսիք, կառավարութիւնը վերացրեց նրանց տուրքից ազատ լինելու արտօնութիւնը, հակառակ Վրաստանի, ուր ժառանգական գիւղապետները ճանաչուեցին մինչեւ իսկ որպէս ժառանգական իշխաններ: Ինչպէս երեւում է՝ «չափէն աւելի» արտօնման սխալը մի տեղ՝ առիթ է եղել մի ուրիշ տեղի «չափէն պակաս»ի ծայրայեղութեան: Վասնզի ինչ որ իրական յարաբերութեանն է վերաբերում, վրացական գիւղապետները հայերից միայն նրանով էին առաջ, որ նրանց իշխանութիւնը կամայական էր եւ ճնշիչ, որովհետեւ հողին գամուած գիւղացիները նրանց ճորտերն էին, մինչ հայ գիւղապետների իշխանութիւնը թեթեւ էր, մեղմ եւ բարերար ազդեցութեամբ, որովհետեւ նրանք իշխում էին ազատ մարդկանց վրայ»

Ռուսական Հայաստանում կար, ասում է Հաքստհաուզէն, նաեւ մի տեսակ ընդհանուր պետ, բայց միայն հայ տարրի համար: Ինչպէս որ թաթարները ունէին իրենցը՝ խանը: Այդ արտօնութիւնը պատկանում էր Երեւանի ժառանգական հայ մելիքին՝ Աղամալեան գերդաստանի աւագ անդամին*), բայց Հայաստանում ոչ հայ Մելիքը, ոչ էլ թաթար խանը չհասան կատարեալ իշխանութեան. նրանք միշտ էլ ենթակայ մնացին պարսից սարդարին, այսինքն՝ Շահի կուսակալին: Հայ մելիքը իր դիրքի եւ պատուի մէջ մնաց մինչեւ ռուսական տիրապետութեան սկիզբը, մինչ թաթար խանը արդէն 40–50 տարի առաջ հեռացուել էր պարսիկների կողմից: «Հայոց Մելիքը մեծ ոյժ ունէր եւ վայելում էր բարձր յարգանք, ոչ միայն հայերի, այլ մինչեւ իսկ պարսիկների մօտ» (Ա. 198):

Այսպիսով տեսնում ենք, որ Հայաստանում իսկական ազնուականութիւն չի եղել. Երեւանի Մելիքը, ինչպէս եւ թարխանները ու ժառանգական գիւղապետները պատուոյ պաշտօններ են եղած:

Այս պայմաններում, ի հարկէ, չէր կարող լինել եւ աւատականութիւն:

«Ճորտատիրութեան հետքն անգամ չկայ Հայաստանում»: Դրան աւելացնում է Հաքստհաուզէն, որ ճորտատիրութիւն առհասարակ գոյութիւն չունի մահմեդական կամ մահմեդական իշխանութեան ենթակայ երկիրներում, այլ, դրա փոխարէն, անձնական ստրկութիւն:

Հաքստհաուզէնի այս կարծիքը մասամբ միայն ճիշդ համարել կարելի է: Բայց չծանրանանք եւ անցնինք:

Հայ համայնքները, դիտում է Հաքստհաուզէն, հինէն ի վեր կառավարուել են ընտրովի մեծերի եւ նրանց 2–3 խորհրդականների ձեռքով: Դրանք են եղել կարգ ու կանոն պահպանողները, ամէն տեսակ վէճերը յարդարողները. (Ա. 188):

Ժառանգական վէճերը լուծում են միջնորդ դատաւորները (Ա. 164): Այդ խնդրում հայերը հետեւում են վրացիների օրէնքներին եւ սովորոյթներին:

Հայ ընտանեկան կազմը եւ կենցաղը*) եւս համապատասխանել է հայ ժողովուրդին ի ընէ յատուկ ժողովրդական ոգուն: Դա Հաքքստհաուզէն անուանում է «ըստ ամենայնի նահապետական». (Ա. 197): Մէկ կէտի մէջ էապէս տարբեր էր հայ ընտանիքը ասիական

*) Հաքստ. իր գրքում առաջ է բերում (Ա. 191) Արովեանի «Պատանեկական յիշողութիւններից» առնելով, Մելիք Սահակ Աղամալեանի մանրամասն նկարագրութիւնը:

*) Հայ ընտանիքի մանրամասն նկարագրութիւնը տալիս է Հաքստհաուզէն իր գրքի առաջին հատորի մէջ (երես 197–203):